16. 02. 2017թ.

ք. Երևան

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 342045/03

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 260 գործը և ուսումնասիրելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 260 արձանագրությունը,

ՊԱՐԶԵՑԻ

Ա/Ձ Արթուր Հակոբյանը (ՀՎՀՀ՝ 27907994) <<Եկամտային հարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել 2016թ նոյեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվարկը:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244[2] , 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի՝ Արթուր Հակոբյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 20.000 դրամի չափով:

Իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյան

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝

Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն ընդունելու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարներին. **900005240487՝** տուգանքի **70%, 900013000246՝** տուգանքի **30%** վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:

Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնակցեցի գործի քննությանը , որոշման վերաբերյալ առարկություններ չունեմ_____

ստորագրություն

Ստացա որոշման պատճենը _____